



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2971

Հ. 4. 4. 4. սԳԻՏ-ԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Պաշտամարտեալ բոլոր ցեղեաների, միացեալ

ԱՏԵԼԻ

ԱՐԱԵՎԻՔԻ
ԱՊԴՐՎՈՒՐԴՆԵՐԻ
ՀԱՄԱՍՏԱՐԱԿՈՒՄԻ
ՔԱՂՋՎԵՎԱԿԻ
ԿԱՂՋՎԵՎԱԿԻ
ԿԱՂՋՎԵՎԱԿԻ
ՄԱԼԻ

3Կ33
Ա-86

„ԿՈՄՈՒՆԻՍՏ“ ԱՄՍԱԳՐԻ № 3 4-Ի ՀԱՎԵԼՎԱԾ

10 JUN 2005

Հ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

5K33

6-86

Պրոլետարեներ բոլոր յերկրների, միացե՛ք

300
2560-US

ԱՍԱԼԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ 2009

ԱՐԵՎԵԼՔԻ ՃՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

„ԿՈՄՈՒՆԻՏԵՍ“ ԱՄՍԱԳՐԻ № 3-Ի ՀԱՎԵԼՎԱԾ

Ընկերներ, թույլ տվեք, ամենից առաջ, վողջունել ձեզ
Արևելքի Աշխատավորության Համալսարանի գոյության 4-ամյա
տարեղարձի առթիվ։ Ինչ ասել կուզե, վոր յես ձեր Համալսա-
րանին ամենայն հաջողություններ եմ ցանկանում Արևելքի
համար կոմունիստական կադրեր պատրաստելու դժվարին գոր-
ծում։

Հետո, թույլ տվեք ներողություն խնդրել այն բանի հա-
մար, վոր յես շատ հազվադեպ եմ լինում ձեզ մոտ, չնայած՝
պարտավոր եմ հաճախ լինելու։ Ինչ կարող եմ անել, — աշխա-
տանքներով չափից գուրս ծանրաբեռնված լինելու պատճառով
հնարավորություն չկա ավելի հաճախ այցելելու ձեզ։

Իսկ այժմ անցնենք այն հարցին, թե քաղաքական ինչ
անելիքներ ունի Արևելքի Աշխատավորության Համալսարանը։

Յեթե վերլուծության յենթարկենք Արևելքի Աշխատավո-
րության Համալսարանի կազմը, մի տեսակ յերկվություն և ներ-
կայացնում։ Այդ համալսարանն իր շուրջն և համախմբել արեել-
քի վոչ պակաս քան 50 ազգությունների ու աշխարհագրական
իմբակցությունների ներկայացուցիչների։ Համալսարանի ուն-
կընդիրները, նրանք բոլորը—Արևելքի զավակներ են։ Սակայն
այդ վորոշումը գեռես վորեն պարզ ու կատարյալ բան չի ասում։
Բանն այն է, վոր Համալսարանի ունկնդիրների շրջանում յեր-
կու հիմնական խմբակ կա, վորոնք զարգացման տարբեր պայ-
մանների յերկու շարք ֆեն ներկայացնում։ Առաջին խմբակը, —
այդ այնպիսի մարդկակ ֆեն, վորոնք մեզ մոտ են յեկել Խորհըր-
դային Արևելքից, այն յերկրներից, վորտեղ այլևս բուրժուա-
զիայի իշխանություն չկա, վորտեղ իմպերիալիստական լուծը
տապալված և և իշխանության գլուխն են անցել բանվորները։
Ունկնդիրների յերկրորդ խումբը—այդ այն մարդկն են, վորոնք
մեզ մոտ են յեկել գաղութային և կախյալ (զայսիմայ)՝
յերկրներից, այն յերկրներից, վորտեղ գեռես կապիտալիզմի և
թագավորում, վորտեղ իմպերիալիզմի լուծը գեռես պահպանում
և իր ամբողջ ուժը, և վորտեղ գեռես հարկավոր և անկախու-
թյուն նվաճել գուրս վոնդելավ իմպերիալիստաներին։

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր մեր առաջ յերկու
Արևելք կա, վորոնք ապրում են տարրեր կյանքով և տարրեր
պայմաններում զարգանում։

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառ. № 104 թ. Պատ. № 4349 Տիրաժ 2000

Ինչ ասել կուզե, վոր ունկնդիրների կազմի այդ յերկուքը՝
բնույթը չի կարող իր կնիքը չդնել Արևելքի Աշխատավորության
համալսարանի աշխատանքների վրա։ Արանով և հենց
բացարձում այն հանգամանքը, վոր այդ համալսարանը մի
վոտքով կանգնած ե խորհրդային, իսկ մյուս վոտքով՝ գաղութների և կախյալ յերկրների հողի վրա։

Այստեղից ե բգխում և այն հանգամանքը, վոր համալսարանի գործունեյությունը յերկու գծով և ընթանում. մի գիծը նպատակ ունի այնպիսի կազրեր պատրաստելու, վորոնք կարողանան բավարարել Արևելքի Խորհրդային հանրապետությունների կարեները, մյուս գիծը նպատակ ունի այնպիսի կազրեր պատրաստելու, վորոնք կարողանան բավարարել Արևելքի գաղութային և կախյալ յերկրների աշխատավոր մասսաների հեղափոխական պահանջները։

Այստեղից ել Արևելքի Աշխատավորության համալսարանի առաջ ծառացած յերկու տեսակի խնդիրներ են բգխում։

Քննության առնենք և Արևելքի Աշխատավորության կոմունիստական համալսարանի այդ խնդիրներն առանձին առանձին։

ԱԱԿՀ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱՏՄՍՍԲ

Վորոնք են այդ յերկրների, այդ հանրապետությունների բնորոշ հատկությունները, ի տարբերումն գաղութային և կախյալ յերկրներից։

Նախ՝ այն, վոր այդ հանրապետությունները աղատ են իմպերիալիստական ձնշումից։

Յերկրորդ՝ այն, վոր նրանք, վորպես ազգություններ, զարգանում ու համախմբվում են վոչ թի բուրժուական կարգերի, այլ Խորհրդային իշխանության պաշտպանության ներքո։ Այս անորինակ մի փաստ և պատմության մեջ, սակայն այնուամենայնիվ փաստ են։

Յերրորդ՝ այն, վոր վորչափով նրանք արդյունաբերական տեսակետից քիչ են զարգացած, նրանք իրենց զարգացման ընթացքում կարող են հենքել Խորհրդային Միության արդյունաբերական պրոլետարիատի աջակցության վրա։

Չորրորդ՝ այն, վոր այդ հանրապետությունները, աղատ

լինելով գաղութային հարստահարումից, գտնվելով պրոլետարիատի գիտատուրայի պաշտպանության ներքո և անդամ լինելով Խորհրդային Միության, կարող են և պեաք և հաղորդակից լինեն մեր յերկրի սոցիալիստական շինարարությանը։

Հիմնական խնդիրն այն է, վոր այդ հանրապետությունների բանվորներին ու գյուղացիներին մեր յերկրի սոցիալիզմի շինարարությունը հազորդակից անելու գործը հեշտացնենք և այդ հանրապետությունների գոյության առանձնահատուկ պայմանների համաձայն այնպիսի նախադրյաներ ստեղծենք ու զարգացնենք, վորոնք կարողանան առաջ մղել ու արագացնել հազորդակից լինելու գործը։

Այստեղից Խորհրդային Արևելքի ակտիվ աշխատավորների առաջ ծառացած հետեւյալ հերթական խնդիրներն են բգխում։

1. Արևելքի Խորհրդային հանրապետություններում ստեղծել արգյունաբերական ոչախներ, վորպես բազաներ՝ գյուղացիներին բանվոր դասակարգի շուրջը համախմբելու համար։ Դուք գիտեք, վոր այդ գործին արդեն ձեռնարկված ե և նա առաջ և ընթանալու Խորհրդային Միության տնտեսական աճման հետ զուգընթաց։ Այն հանգամանքը, վոր Արևելքի Խորհրդային հանրապետություններում զանազան տեսակի հում նյութեր կան, յերաշխիք և այն բանի, վոր ժամանակով այդ գործն իր վախճանին կը հասցնենք։

2. Զարգացնել գյուղանատեսությունը և, ամենից առաջ, վոռոգման ցանցը։ Դուք գիտեք, վոր այդ գործն ևս առաջ և ընթանում, համենայն դեպս, Անդրբլուզառում և Թուրքիստանում։

3. Բարձրացնել և առաջ մղել գյուղացիների ու տնայնագործների լայն մասսաների կոռպերացման գործը, վորպես Արևելքի Խորհրդային հանրապետությունները խորհրդային տընտեսական շինարարության սիստեմի մեջ մտցնելու ամենամեջ՝ մարիտ ճանապարհ։

4. Խորհուրդները մոռեցնել մասսաներին, նրանց, ըստ իրենց կազմի, ազգային զարձնել և, այդպիսով հիմք դնել աշխատավոր մասսաներին մոտ ու հասկանալի ազգային խորհրդային պետականության։

5. Զարգացնել ազգային կուլտուրան տեղում մայրենի լեզվով ինչպես հանրակրթական, այնպես և արհեստակցական—տեխնիքական բնույթ կրող դասընթացների ու դպրոցների լայն ցանց տարածել՝ տեղական մարդկանցից խորհրդային կու-

սակցական և արհեստական-տնտեսական կազմեր պատրաստելու համար:

Կատարել այն խնդիրները-այդ հենց նշանակում և Արեգելքի Խորհրդային հանրապետություններում սոցիալիստական հնարարության գործը հետացնել:

Խոսում են Խորհրդային Արևելքի որինակելի հանրապետությունների մասին: Սակայն Բնչ եռինակելի հանրապետությունը՝ Որինակելի հանրապետությունը այն հանրապետությունն և, վորը բոլոր այս խնդիրներն աղնվությամբ ու բարեխզնությամբ կատարում ե, դրանով իսկ հարևան գաղութային և կախյալ յերկրների բանվորների ու գյուղացիների շրջանում ազատազրական շարժման ձգում ստեղծելով:

Յես վերեւում խոսեցի Խորհուրդները ազգությունների աշխատավոր մասսաներին մոտեցնելու մասին, — Խորհուրդների աղքայնացման մասին: Սակայն Բնչ և այդ նշանակում և Բնչով ենա գործնականում արտահայտվում: Յես կարծում եմ, վոր մասսաներին այդ ձևով մոտենալու նմուշ կարելի և համարել Թուրքեստանում վերջերս ավարտված աղքային անշատումը՝ Բուրժուական մամուն այդ անշատումը նկատում և վորպես «բայլշերկական խորամանկություն»: Մինչդեռ, պարզ ե, վոր այստեղ վոչ թե «խորամանկություն» և յեղել, այլ այն, վոր Թուրքմենստանի և Ուզբեկստանի ժողովրդական մասսաները խորապես ձգտել են ունինալու իշխանության իրենց սեփական որդանները՝ իրենց մոտ ու հասկանալի: Նախահեղափոխական շրջանում այդ յերկու յերկրները կտոր-կտոր եյին արված զանազան իշխանությունների և պետությունների միջև, գործունիության հարմար վայր ներկայացնելով «իշխանություն ունեցողների» շահագործական գիտավորությունների համար: Այժմ հասել ե մոմենտը, յերբ հնարավորություն և ստեղծվել այդ բաժան-բաժան կտորները միացնել և կազմել անկախ պետություններ՝ Ուզբեկստանի և Թուրքմենստանի աշխատավոր մասսաներին իրար մոտեցնելու և իշխանության որդաններին շաղկապելու համար:

Թուրքեստանի անշատումն, ամենից առաջ, այդ յերկրների կտոր-կտոր յեղած մասերի միացումն ու անկախ պետություններ ստեղծելն ե: Յեթե այդ պետությունները հետագայում ցանկություն են հայտնել Խորհրդային Միության մեջ մտնել վորպես նրա իրավահարվածար անդամներ, ապա այդ վկայում և մի-

այն այն, վոր բայլշեվիկները գտել են Արևելքի ժողովրդական մասսաների խորագույն ձգտություների բանալին, իսկ Խորհրդային Միությունն ել տարբեր ազգությունների պատկանող աշխատավոր մասսաների միակ ինքնակամ միավորումն և ամբողջ աշխարհում: Լեհաստանը միացնելու համար բուրժուազիան ստիպված և յեղել մի շարք պատերազմներ մղել: Իսկ Թուրքմենստանն ու Ուզբեկստանը միացնելու համար հարկավորվել և միայն, վոր կոմունիստաները մի քանի ամիս պարզաբանիչ պրոպագանդ մղեն:

Ահա թե ինչպես պիտի մոտեցնել կառավարչության որդանները, տվյալ գեպօւմ՝ խորհուրդները տարբեր ազգությունների պատկանող աշխատավորության լայն մասսաներին:

Ահա թե վորտեղ և ապացույցն այն բանի, վոր բայլշեվիկական աղքային քաղաքականությունը միակ ճշմարիտ քաղաքանությունն ե:

Հետո, յես խոսեցի Արևելքի խորհրդային հանրապետություններում աղքային կուլտուրան բարձրացնելու մասին: Սակայն Բնչ բան եազգային կուլտուրան: Ի՞նչպես հաշտեցնել այդ կուլտուրան պրոլետարական կուլտուրայի հետ: Միթե՛ գենես պատերազմից առաջ Լենինը չի ասել, վոր յերկու կուլտուրա կա, — բուրժուական և սոցիալիստական, վոր աղքային կուլտուրայի լողունքը բուրժուազիայի ռեակցիոն լողունքն ե, այն բուրժուազիայի, վորն աշխատում և աշխատավորության գիտակցությունը թունավորել նացիոնալիզմի թույնով: Ի՞նչպես հաշտեցնել աղքային կուլտուրայի շինարարությունը, մայրենի լեզվով գլորոցների ու զաւոնթացների զարգացումը և տեղական մարդկանցից կադրեր մշակելը սոցիալիզմի շինարարության, պրոլետարական կուլտուրայի շինարարության հետ: Զկա այստեղ արդյոք անանցանելի ներհակություն: Ի հարկե, չկա: Մենք ստեղծում ենք պրոլետարական կուլտուրա: Այդ միանգամայն ճիշտ ե: Սակայն ճիշտ ե և այն, վոր պրոլետարական կուլտուրան, իր բովանդակությամբ սոցիալիստական լինելով հանգերձ, սոցիալիստական շինարարության ասպարեզ մղված տարբեր ժողովուրդների մոտ, արտահայտության տարբեր ձեեր ու տարբեր յեղանակներ և ընդունում, նայած լեզվի, կինցաղի և այլ համականիշների տարբերությանը: Իր բովանդակությամբ պրոլետարական, իսկ ձեռվ աղքային, — այդ և այն համամարդկային կուլտուրան, դեպի վորն ընթանում և սոցիալիզմը: Պրոլետա-

բական կուլտուրան չի վերացնում ազգային կուլտուրան, այլ բովանդակություն և տալիս նրան, Յեփ, ընդհակառակը, ազգային կուլտուրան չի ժխտում պրոլետարական կուլտուրան, այ ձեւ և տալիս նրան:

Ազգային կուլտուրայի լոգունքը բուրժուական լողունք եր, քանի գեռ իշխանության գլուխ եր անցել բուրժուազիան, իսկ ազգությունների միացումը տեղի յեր ունենում բուրժուական կարգերի պաշտպանության ներքո: Ազգային կուլտուրայի լո- զունքը պրոլետարական լողունք դարձավ, յերբ իշխանության գլուխ անցավ պրոլետարիատը, իսկ ազգությունների միացումը սկսեց տեղի ունենալ Խորհրդային իշխանության պաշտպանության ներքո: Ով չի ըմբռնել յերկու տարրեր հանգամանքների սկզբունքային այս տարրերությունը, նա յերբեք չի ըմբռնի վճ լենինիզմը, վճ ել ազգային հարցի եյությունը լենինիզմի տեսակետից:

Խոսում են (որինակ՝ Կառուցկին) այն մասին, վոր սոցիա- լիզմի դարաշրջանում, յերբ բոլոր մնացած լեզուները կը մեռնեն, միասնական համամարդկային լեզու կատեղձվի: Յես քիչ եմ հա- վատում միասնական համայնապարփակ լեզվի այդ թեորիային: Փորձառությունը, համենայն գեպս, վոչ թե նման թեորիայի ոգտին ե խոսում, այլ՝ նրա գեմ: Մինչև այժմ այնպես ե յեղել, վոր սոցիալիստական հեղափոխությունը վոչ թե պակասհցրել՝ այլ ավելացրել ե լեզուների թիվը, վորովհետեւ նա, թափահարե- լով մարդկության ամենասորբին խավերը և քաղաքական սազ- մարեմ հանելով նրանց, արթնացնում և նոր կյանքի յե կոչում առաջնում անհայտ կամ սակավ հայտնի մի շարք նոր ազ- գությունների: Ով կարող եր կարծել, վոր հին ցարական Ռու- սաստանում վոչ պակաս քան 50 ազգություն ու աշխարհա- գրական խմբակցություն ե յեղել: Սակայն, Հոկտեմբերյան հե- ղափոխությունը, վշտելով հին շղթաները և լույս աշխարհ հա- նելով մի ամրող շարք մոռացության մատնված ժողովուրդնե- րի ու ազգությունների, նրանց նոր կյանք ու նոր զարգացում տվեց: Ներկայումս խոսում են Հնդկաստանի մասին, վորպես մի միացյալ ամբողջի մասին: Սակայն ամեն կասկածից դուրս ե, վոր Հնդկաստանում հեղափոխական ցնցումներ ծագելու դեպ- քում լույս աշխարհ կան իրենց հատուկ լեզուն ու իրենց հատուկ կուլտուրան ունեցող առաջներում անհայտ յեղած տասնյակ ազգու- թյուններ: Յեվ յեթե գործը վերաբերում ե տարրեր ազգություննե-

րին պրոլետարական կուլտուրային հաղորդակից անել ապա ամեն կասկածից դուրս ե, վոր հաղորդակից անելու այդ պրոցեսը տեղի յեւ ունենալու այդ ազգությունների լեզվին ու կենցաղին հա- մապատասխանող ձևերով:

Վերջերս յես բուրյաթ ընկերներից մի նամակ ստացա, վո- րի մեջ նրանք խնդրել եյին պարզաբանել համամարդկային ու ազգային կուլտուրաների փոխհարաբերությունների լուրջ ու դժվարին հարցերը: Ահա նամակը.

«Թափանձագին խնդրում ենք պարզաբանել հետեւյալ, մեզ համար չափազանց լուրջ ու դժվարին հարցերը: Կոմու- նիստական կուսակցության վերջնական նպատակը՝ միաս- նական համամարդկային կուլտուրան ե: Ի՞նչպես ե հասկաց- վում մեր առանձին ինքնավար հանրապետությունների սահմաններում զարգացող ազգային կուլտուրաների միջո- ցով զեպի միասնական համամարդկային կուլտուրա- տեղի ունենալիք անցումը: Ի՞նչպես պիտի կատարվի ա- ռանձին պազգային կուլտուրաների առանձնահատկություննե- րի (լեզու և այլն) ասսիմիլիացիան»:

Յես կարծում եմ, վոր վերեցում ասածս կարող եր պատաս- խան ծառայել բուրյաթ ընկերներին հուզող հարցին:»

Բուրյաթ ընկերները առանձին ազգությունների ասսիմիլի- ացիայի հարց են հարուցում համամարդկային պրոլետարական կուլտուրա ստեղծելու ընթացքում: Կասկածից դուրս ե, վոր մի քանի ազգությունների կարող են յենթարկվել ե, թերեւ, ան- շուշտ կենթարկվեն ասսիմիլիացիայի պրոցեսին: Այդպիսի պրո- ցեսներ յեղել են և առաջներում: Սակայն բանկ այն ե, վոր մի քանի ազգությունների ասսիմիլիացիայի յենթարկվելու պրո- ցեսը վոչ թե բացասում, այլ յենթարկը ու մի ամրող շարք զորեղ ազգությունների ուժեղացման և զարգացման ներհակ պրո- ցեսը, վորովհետեւ ասսիմիլիացիայի յենթարկվելու մասնակի պրոցեսը հետեւյանք և ազգությունների զարգացման ընդհանուր պրոցեսի: Հենց այս պահանոով մի քանի առանձին ազգու- թյունների հնարավոր ասսիմիլիացիան վոչ թե թուլացնում, այլ հաստատում և միանգամայն ճիշտ դրությունը, վոր պրոլետա- րական համամարդկային կուլտուրան, վոչ թե բացասում, այլ յենթարկը ու ու սնում ազգային կուլտուրա, ճիշտ այնպես, ինչպես ազգային կուլտուրան վոչ թե վերացնում, այլ լա- ցնում ու հարստացնում ե համամարդկային պրոլետարական կուլտուրան:

Ընդհանուր առմամբ սրանք են Արևելքի ակտիվ աշխատավորների առաջ ծառացած հերթական խնդիրները:

Սրանք են այդ խնդիրների բնույթն ու բովանդակությունը:

Անհրաժեշտ ե ուժեղացրած տնտեսական շինարարության և գյուղացիությանն արվելք նոր զիջումների վերահսկող շրջանն ոգտագործել այն բանի համար, վորպեսզի առաջ մղենք այդ խնդիրների իրագործումը և այդպիսով գյուրացնենք Արևելքի Խորհրդային հանրապետությունների, այդ գերազանցորեն գյուղացիական յերկրների Խորհրդային Միության սոցիալիզմի շինարարությանը հաղորդակից անելու գործը:

Ասում են, թե գյուղացիության նկատմամբ կուսակցության նոր քաղաքականությունը, մի շարք նոր զիջումներ անելով (կարճատե վարձակալություն, վարձու աշխատանքի թույլատրում), իր մեջ նահանջի վորոշ տարրեր և պարունակում, ձիշտ և այս արդյոք: Այս, ճիշտ ե: Սակայն, այդ նահանջի այնպիսի տարրեր են, վոր մենք թույլ ենք տալիս մեզ անելու ուժերի հսկայական գերազառությունը կուսակցության և Խորհրդային իշխանության կողմը պահելով հանդերձ:

Կայուն վայյուտա, զարգացող արդյունաբերություն, զարգացող տրանսպորտ, ամրապնդված վարկային սիստեմ, վորի ոգնությամբ, արտօնյալ վարկի միջոցով, առանց փոքրիկ ցընցումի կարելի յե քայլքայել կամ բարձր աստիճանի հասցնել ազգաբնակչության վոր խավն ուղես, — այս բոլորը պահեստի այնպիսի ուժեր են պրոլետարական դիկտատուրայի ձեռքում, վորոնց հիման վրա ճակատի մի մարտավայրում կատարված նահանջի վորոշ տարրերը կարող են միայն գյուրացնել ամբողջ ճակատով հարձակման անցնելու համար տեղի ունեցող պատրաստությունը: Հենց այս պատճառով կուսակցության կողմից գյուղացիությանն արված մի քանի նոր զիջումները տվյալ մոմենտում փոշ թե պիտի դժվարացնեն, այլ գյուրացնեն գյուղացիությանը սոցիալիստական շինարարության հաղորդակից անելու գործը:

Ի՞նչ նշանակություն կարող ե ունենալ այս հանդամանքն Արևելքի Խորհրդային հանրապետությունների համար, նա կարող ե ունենալ միայն այն նշանակությունը, վոր նա՛ այդ հանրապետությունների ակտիվ աշխատավորների ձեռքը նոր զենք և տալիս, վորը հեշտացնում ու արագացնում է այդ յերկրների:

և խորհրդային տնտեսական զարգացման ընդհանուր սիօտեմի մերձեցման գործը:

Այս և կուսակցության՝ գյուղում բռնած քաղաքականության և խորհրդային Արևելքի ակտիվ աշխատավորների առաջ ծառացած հերթական խնդիրների միջև յեղած կապը:

Սրա հետևանքով Արևելքի ժողովուրդների համալսարանի անելքը Արևելքի խորհրդային հանրապետությունների նկատմամբ այն պետք ե լինի, վոր այդ հանրապետությունների համար կադրեր դաստիարակի այնպիսի ուղղությամբ, վորն ապահովեր վերոհիշյալ հերթական խնդիրների իրագործումը:

Արևելքի ժողովուրդների համալսարանը չի կարող կյանքից կտրվել նա չե և չի յել կարող կյանքից գուրս հիմնարկություն լինել: Նա պետք ե իր գոյության բոլոր արմատներով կապված լինի ուեալ կյանքին: Այս նկատառումով նա չի կարող հեռու պահել իրեն Արևելքի խորհրդային հանրապետությունների առաջ ծառացած հերթական խնդիրներից: Ահա թե ինչու Արևելքի ժողովուրդների համալսարանի անելքն այն պիտի լինի, վոր հաշվի առնի այդ հանրապետությունների հերթական խնդիրները, նրա համար համապատասխան կադրեր դաստիարակելու միջոցին:

Անհրաժեշտ ե ի նկատի ունենալ վոր խորհրդային Արևելքի ակտիվ աշխատավորների գործնականի ասպարիզում յերկու շեղում կա, վորոնց գեմ պայլքարելը՝ այս համալսարանի պատերի ներսում անհրաժեշտ ե այն բանի համար, վորպեսզի կարելի լինի խորհրդային Արևելքի համար իսկական կադրեր և իսկական հեղափոխականներ դաստիարակելի:

Առաջին շեղումը պարզացում ե, այն խնդիրների պարզացումը, վորոնց մասին յես վերելում խոսեցի, տնտեսական շինարարության նմույները մեքենայորեն փոխադրելու գործը, վորոնք միանգամայն հասկանալի և կիրառելի յեն Խորհրդային Միության կենարում, բայց ամենակին չեն սագում այսպիս կոչված ծայրամասերի զարգացման պայմաններին:

Այն ընկերները, վորոնք թույլ են տալիս իրենց այսպիսի շեղում անել, չեն հասկանում յերկու բան: Նրանք չեն հասկանում, վոր կենարոնի ու «ծայրամասերի» պայմանները միենույնը չեն և հեռու յեն իրար նման լինելուց: Նրանք, բացի գրանից, չեն հասկանում, վոր Արևելքի խորհրդային հանրապետություններն իրենք միատեսակ չեն, վոր նրանցից մի քանիսները,

ինչպես որինակ, Վրաստանն ու Հայաստանը կանգնած են ազգային ձևակերպման բարձր աստիճանի վրա, իսկ մի քանիսները, ինչպես Զեչնյան և Գրաբարյան կանգնած են ազգային ձևակերպման ծանր աստիճանի վրա, իսկ մի քանիսներն եւ, ինչպես որինակ Նըրդղատանը, միջին տեղն են բռնում այս յերկու ծայրահեղությունների միջև:

Այդ ընկերները չեն հասկանում, վոր առանց տեղական պայմաններին հարմարվելու, առանց ամեն մի յերկրի բոլոր և ամեն տեսակի առանձնահատկությունները խնամքով հաշվի առնելու, չի կարելի վորեւ լուրջ բան կառուցել: Այդ շեղման հետեւ վանքը լինում է այն, վոր նրանք կարվում են մասսաներից, այլասերվում և ձափ ֆրազուներ դառնում:

Արեւելքի ժողովուրդների Համալսարանի անելիքը պիտի լինի, վոր այդ պարզացման դեմ անհաշտ պայքար մղելու վոգով կադրեր դաստիարակի:

Յերկորդ շեղումը, ընդհակառակը, տեղական առանձնահատկությունները չափազանցնելն է, այն ընդհանուր ու գլխավոր յերկույթը մոռացության տալը, վորը Արևելքի խորհրդային հանրապետությունները կապում եւ Խորհրդային Միության արդյունաբերական շրջանների հետ, սոցիալիստական խնդիրները լուսության տալը և նեղ ու սահմանափակ նացիոնալիզմի խնդիրներին հարմարվելը:

Այն ընկերները, վորոնք թույլ են տալիս իրենց այդպիսի շեղում անել շատ քիչ են հոգ տանում իրենց յերկրի ներքին շինարարության մասին, նրանք գերազանցում են այդ զարգացումը թողնել իրերի բնական ընթացքին: Երանց համար զլաւորը ներքին շինարարությունը չի, այլ «արտաքին» քաղաքականությունը, իրենց հանրապետության սահմանների ընդլայնումը, շրջապատող հանրապետությունների դեմ տրանժալը, հարեվաններից ավելորդ կտոր զավթելը և այդպիսով իրենց յերկրի բուրժուական նացիոնալիստներին դուր գալու ցանկությունը:

Այդ շեղման հետևանքը լինում է այն, վոր սոցիալիզմից կտրվում են, վատասերվում և զառնում սովորական բուրժուական նացիոնալիստներ:

Արևելքի ժողովուրդների Համալսարանի անելիքը պիտի լինի այն, վոր այդ ծածուկնացիոնալիզմի դեմ անհաշտ պայքար մղելու վոգով կադրեր դաստիարակի:

Սրանք են Արևելքի ժողովուրդների Համալսարանի անե-

մեքները՝ Արևելքի խորհրդային հանրապետությունների նկատմամբ:

ԱԱԿՀ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՔԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՅԵՎ ԿԱԽՅԱԼ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍՐ

Անցնենք յերկրորդ հարցին, այն հարցին, թե ինչ անելիքներ ունի ԱԱԿՀ Արևելքի գաղութային և կախյալ յերկրների նկատմամբ:

Վորդնք են այդ յերկրների գոյության ու զարգացման բնորոշ առանձնահատկությունները, ի տարբերություններից Արևելքի հորհրդային հանրապետություններից:

Առաջին այն, վոր բոլոր այդ յերկրները ապրում ու զարգանում են իմպերիալիզմի ճնշման տակ:

Յերկրորդ՝ այն, վոր կրկնակի ճնշումը, ներքին ճնշումը (սեփական բուրժուազիայի) և արտաքին ճնշումը (ոտար իմպերիալիստական բուրժուազիայի), այդ յերկրներում սրբում ու խորացնում և հեղափոխական ճնշմաժամբ:

Յերրորդ՝ այն, վոր այդ յերկրներից մի քանիսում, որին չնդիրաստանում կապիտալիզմն աճում է ուժեղ թափով, առաջ բերելով և ձեվակերպելով տեղական պրոլետարների բավական մեծաքանակ մի գասակարգ:

Չորրորդ՝ այն, վոր հեղափոխական շարժման աճման հետ միասին, այդ յերկրների աղքային բուրժուազիան պառակտվում է յերկու մասին՝ հեղափոխական (մասը բուրժուազիա) և համաձայնողական (խոշոր բուրժուազիա), վորոնցից առաջինը շարունակում է հեղափոխական պայքարը, իսկ յերկրորդը բլոկ է կազմում իմպերիալիզմի հետ:

Հինգերորդ՝ այն, վոր իմպերիալիստական բլոկի կողքին այդ յերկրներում կազմվում է մի այլ բլոկ, բանվորների և հեղափոխական մասը բուրժուազիայի բլոկը, հակախմակերիալիստական մի բլոկ, վոր հետապնդում է իմպերիալիզմից լիովին ազատագրվելու նպատակներ:

Վեցերորդ՝ այն, վոր այդպիսի յերկրներում, պրոլետարիատի հեղեմոնիայի և ժողովրդական մասսաները համաձայնողական ազգային բուրժուազիայի ազդեցության տակից ազատելու հարցն որեցոր ավելի կենսական բնույթ և ընդունում:

Յոթերորդ՝ այն, վոր այդ հանգամանքը նկատելի չափերով դյուրացնում է այդպիսի յերկրների ազատագրական ազգային

շարժման և արեվմուտքի առաջավոր յերկրների պրոլետարական շարժման շաղկապման գործը:

Սրանից յերեք հետեւվություն ե բղխում.

1. Առանց հաղթական հեղափոխության, հնարավոր չե գաղութային և կախյալ յերկրներն իմպերիալիզմից ազատագրել ձրի անկախություն չեն ստանա:

2. Հեղափոխությունն առաջ շարժելը և կապիտալիստականորեն զարգացած գաղութների ու կախյալ յերկրների լիակատար անկախություն նվաճելն անկարելի յե առանց համաձայնողական ազգային բուրժուազիային մեկուսացնելու, առանց մանր բուրժուական հեղափոխական մասսաներին այդ բուրժուազիայի ազգեցության տակից հանելու, առանց պրոլետարիատի հեգեմոնիա ստեղծելու, առանց բանվոր դասակարգի առաջավոր տարրերին ինքնուրույն կոմունիստական կուսակցության մեջ կազմակերպելու:

3. Գաղութային և կախյալ յերկրներում, յերկարատեղ ու հաստատուն հաղթանակ տանել անկարելի յե՝ առանց այդ յերկրների ազատագրական շարժման և արեվմուտքի առաջավոր յերկրների պրոլետարական շարժման ուսալ շաղկապման:

Գաղութային և կախյալ յերկրների կոմունիստների հիմնական անելիքն այն պիտի լինի, վորնրանք իրենց հեղափոխական աշխատանքների ընթացքում յելակես ունենան այս հետեւթյունները:

Այս հանգամանքների հետեւվանքով ինչ հերթական անելիքներ ունի գաղութների և կախյալ յերկրների հեղափոխական շարժումը:

Գաղութների և կախյալ յերկրների յուրահատկությունը տվյալ մոմենտում այն ե, վոր այլևս բնության մեջ միացյալ և համայնապարփակ Արեվելք չկա: Առաջներում գաղութային Արեվելքը պատկերացնում եյին ինչպես մի տեսակ միացյալ և միորինակ յերկիր: Այժմ այդ պատկերացումն արգեն իրականությանը չի համապատասխանում: Մենք ներկայումս ունենք, համեմայն դեպս, յերեք կատեգորիայի գաղութային և կախյալ յերկրներ:

Առաջին Մարոկկոյի պես յերկրները, վորոնք չունեն կամ համարյա թե չունեն իրենց պրոլետարիատը և արդյունաբերական տեսակետից միանգամայն հետամնաց են:

Յերկրորդ՝ Զինաստանի և Յեգիպտոսի պես յերկրներ,

վորոնք արդյունաբերական տեսակետից քիչ են զարգացած և համեմատաբար փոքրականակ պրոլետարիատ ունեն:

Յերրորդ՝ Հնդկաստանի պես յերկրները, վորոնք կապիտալիստականորեն քիչ թե շատ զարգացած են և ունեն քիչ թե շատ բազմաքանակ ազգային պրոլետարիատ:

Պարզ ե, վոր վոչ մի հնարավորություն չկա բոլոր այս յերկրները մի տախտակի վրա դնելու:

Այսպիսի յերկրների համար, ինչպես Մարոկկոն ե, վորտեղ ազգային բուրժուազիան դեռևս հիմք չունի հեղափոխական և համաձայնողական կուսակցությունների պառակտվելու, կոմունիստական տարրերի անելիքը պիտի լինի այն, վոր ձեռք առնեն բոլոր միջոցներն իմպերիալիզմի դեմ միացյալ ազգային ճակատ ստեղծելու համար:

Այդպիսի յերկրներում կոմունիստական տարրերին զատելը և նրանցից միանական կուսակցություն ստեղծելը կարող ե տեղի ունենալ միայն իմպերիալիզմի դեմ պայքար մղելու ընթացքում, հատկապես իմպերիալիզմի դեմ հաղթական հեղափոխական պատերազմ մղելուց հետո:

Այսպիսի յերկրներում, ինչպես Յեգիպտոսուն ու Զինաստանն են, վորտեղ ազգային բուրժուազիան արդեն պառակտվել ե հեղափոխական և համաձայնողական կուսակցությունների, սակայն վորտեղ բուրժուազիայի համաձայնողական մասը դեռևս չի կարող զորվել իմպերիալիզմի հետ, կոմունիստներն արգեն չեն կարող ինենց նպատակ դնել իմպերալիզմի դեմ միացյալ ազգային ճակատ կազմելը:

Այդպիսի յերկրներում կոմունիստները պետք ե միացյալ ազգային ճակատ կազմելու քաղաքականությունից անցնեն բանվորների ու մանր բուրժուազիայի հեղափոխական բլոկ կազմելու քաղաքականությանը: Այդպիսի յերկրներում այդ բլոկը կարող է ընդունել միացյալ կուսակցության՝ բանվորազյուղացիական կուսակցության ձե, ինչպես «Գոմինդան» կուսակցությունն ե, այն պայմանով սակայն, վոր այդ յուրահատուկ կուսակցությունն իրականություն յերկու ուժերի, կոմունիստական կուսակցության և հեղափոխական մանր բուրժուազիայի կուսակցության բլոկ ներկայացնի: Մերկացնել ազգային բուրժուազիայի թերառությունն (պоловинчатօտ) ու անհետելվողականությունը և վճարական պայքար մղել իմպերիալիզմի դեմ, — սրանք պիտի լինեն այդ բլոկի անելիքները:

Այսպիսի յերկազմ կուսակցությունը հարկավոր և ունակատակահարմար, յեթե նա չի կապում կոմկուսակցության վոտքերն ու ձեռքերը, չի կաշկանդում նրան, յեթե նա չի ճնշում կոմկուսակցության աղիտացիոն և պրոպագանդիստական աշխատանք կատարելու աղատությունը, յեթե նա արգելքներ չի հարժւցանում պրոլետարիներին կոմկուսակցության շուրջը համախմբելու աշխատանքներին, յեթե նա դյուրացնում և կոմկուսակցության կողմից հեղափոխական շարժումը փաստորեն դեկավարելու գործը:

Այսպիսի յերկազմ կուսակցությունը հարկավոր չի և փոչ ել նպատակահարմար, յեթե նա չի համապատասխանում բուռու այս պայմաններին, վորովհետեւ նա կարող և միայն նպատել, վոր կոմունիստական տարրերը լուծվեն բուրժուազիայի շարքերում, վոր կոմկուսակցությունը կորցնի պրոլետարական բանակը:

Մի քիչ այլ կերպ և գրությունը այնպիսի յերկրներում, ինչպես Հնդկաստանն է: Հնդկաստանի պես յերկրների գոյության պայմաններում նկատվող հիմնական և նոր յերկույթը վոչ միայն այն և, վոր ազգային բուրժուազիան պառակտվել և հեղափոխական և համաձայնողական կուսակցությունների, այլ, ամենից առաջ այն, վոր այդ բուրժուազիայի համաձայնողական մասն արդեն կարողացել և հիմնականում ընդհանուր լեզու գոնել իմալերիալիզմի հետ:

Հեղափոխությունից ավելի շատ վախենալով, քան իմպերիալիզմից, իր գրապահի շահի մասին ավելի շատ հոգալով, քան սեփական հայրենիքի շահերի մասին, բուրժուազիայի այդ մասը, վոր ամենից հարուստն ու ազգեցին և, յերկու վոտքով կանգնում և հեղափոխության անհաշտ թշնամիների բանակում, բլոկ կնքելով իմպերիալիզմի հետ՝ ընդգեմ իր սեփական յերկրի բանվորների ու դյուրացիների: Առանց այդ բլոկը ջախջախելու հեղափոխության հաղթանակի չի կարելի համեմ: Սակայն, վորպեսզի կարելի լինի այդ բլոկը ջախջախել, հարկավոր և կրակը կենտրոնացնել համաձայնողական ազգային բուրժուազիայի դեմ, մերկացնելով նրա դավաճանական դերը, ազատելով աշխատավոր մասսաներին նրա ազգեցությունից և սիստեմատիկաբար պրոլետարիատի հեղեմոնիայի համար անհրաժեշտ պայմաններ նախապատրաստել:

Այլ կերպ առած, խոսքն այն մասին և, վոր այնպիսի գա-

ղութներում, ինչպես Հնդկաստանն և, պրոլետարիատին պետք ենախապատրաստել աղատազրական շարժման առաջնորդի դեր կատարելու համար, քայլ առ քայլ այդ պատվավոր դիրքից հեռացնելով բուրժուազիային ու նրա մունիստիկներին: Պետք ենտեղծել հեղափոխական հակաֆարբիալիստական բլոկ և այդ բլոկում ապահովել պրոլետարիատի հեղեմոնիան—այսպես եղբած ինդիրը: Այդ բլոկը չպետք ե միացյալ բանվորա-գյուղացիական այնպիսի կուսակցության ձև ընդունի, վորը կապակցված և ձևականորեն միասնական պլատֆորմայով: Այդպիսի յերկրներում կոմկուսակցության ինքնուրույնությունը պետք ե կոմունիզմի առաջավոր տարրերի հիմնական լոգունգը լինի, վորովհետեւ պրոլետարիատի հեղեմոնիան նախապատրաստել ու կիրառել կարող և միայն կոմունիստական կուսակցությունը: Սակայն կոմկուսակցությունը կարող և և պետք ե բաց բլոկ կազմի բուրժուազիայի հեղափոխական թերթ հետ, վորպեսզի այդպիսով չեղաքացնելով համաձայնողական ազգային բուրժուազիային, իմպերիալիզմի գեմ մղվելիք պայքարում իր յետերից տանի քաղաքի ու գյուղի մասը բուրժուազիայի բազմամիլիոն մասսաներին:

Այստեղից բլոկում են կապիտալիստականորեն զարգացած գաղութների ու կախյալ յերկրների հեղափոխական շարժման հետեւյալ հերթական ինդիրները.

1. Բանվոր դասակարգի լավագույն տարրերին կոմունիզմի կողմը գրավելը և ինքնուրույն կոմունիստական կուսակցություններ ստեղծելը:

2. Համաձայնողական ազգային բուրժուազիայի և իմպերիալիզմի բլոկի գեմ՝ բանվորների, գյուղացիների և հեղափոխական ինտելիգենցիայի ազգային-հեղափոխական բլոկ ստեղծելը:

3. Այդ բլոկում պրոլետարիատի հեղեմոնիայի ապահովումը:

4. Քաղաքի ու գյուղի մասն բուրժուազիային համաձայնողական ազգային բուրժուազիայի ազգեցությունից պահանջանելով համար մղվելիք պայքարը:

5. Ազատագրական շարժման և առաջավոր յերկրների պրոլետարական շարժման շաղկապի ապահովումը:

Ահա այս յերեք խումբ հերթական ինդիրներն են, վործառացած են Արևելքի գաղութային և կախյալ յերկրների ակտիվ աշխատավորների առաջ:

Այդ ինդիրներն առանձնապես լուրջ բնույթ և կարեոր

նշանակություն են ստանում, յեթե նրանց քննության առնենք ներկա միջազգային կացության լույսի տակ: Միջազգային դրությունը տվյալ մոմենտում ընորոշվում է հեղափոխական շարժման ժամանակավոր հանդարարման շրջանով: Սակայն ի՞նչ և հանդարարումը, ի՞նչ կարող ենա նշանակել տվյալ մոմենտում: Նույն կարող են նշանակել միայն Արևմուտքի բանվորների, Արեւելքի գաղութների և ամենից առաջ, Խորհրդային Միության նկատմամբ ձնշման ուժեղացում: Առում եմ ամենից առաջ Խորհրդային Միության նկատմամբ, վարովնետե նա նկատվում է վորովոր յերկրների հեղափոխական շարժումների զբոշակակիր: Կամկածելու տեղիք չի կարող լինել, վոր խմաբերիալիստների շարքերում Խորհրդային Միության նկատմամբ ձնշում գործ դնելու նախապատրաստական աշխատանքներն սկսված են: Եսուն նիայի ապատամբության հետեանքով սկսված զրպարտողական կամպանիան, Սոֆիայի պայմանական հետեանքով Խորհրդային Միության դեմ որիկայարար դավիր նյութելը, ըուրժուական մամուլի բնադանուր արշավը մեր յերկրի դեմ,—այս բոլորը հարձակման անցնելու նախապատրաստական ետապն է: Այս հասարակական կարծիքի հրետանային նախապատրաստություն է, վորը նպատակ ունի քաղքինիներին վարժեցնել Խորհրդային Միության դեմ ձեռնարկելիք հարձակումներին և միջամտության համար բարոյական նախադրյալներ ստեղծել:

Ի՞նչ զուրս կգա ստի ու զրպարտանքի այս կամպանիայից, կը համարձակին արդյոք խմաբերիալիստները լուրջ հարձակման դիմել, — մենք դեռ կը տեսնենք: Բայց, վոր այդ հարձակումները վոչինչ լավ բան չեն խռատանում դադութներին, զրանում կառկածելու վորեն հիմք չկա: Այդ պատճառով խմաբերիալիզմի կողմից սպասվող հավանական հարվածի դեմ հեղափոխության միացյալ ուժերի հակագրու նախապատրաստելու հարցը որվա անխռատիելի հարցն է:

Ահա թե ինչու զաղութներում ու կախյալ յերկրներում, հեղափոխական շարժման հերթական խնդիրների անշեղ իրակործումը տվյալ մոմենտում՝ առանձնապես կարենը նշանակություն է ստանում:

Բոլոր այս հանգամանքների հետեանքով ի՞նչ միսիա ունի կատարելու Արևելքի ժողովարդների Համալսարանը՝ զաղությային և կախյալ յերկրների նկատմամբ: Նրա միսիան հետեյալն է: Նա պետք է հաշվի առնի այդ յերկրների հեղափոխական զար-

գացման բոլոր առանձնահատկությունները և այդ յերկրներից յեկած կազմերին զաստիարակի այնպիսի ուղղությամբ, վորն ապահովել և վերոհիշյալ բազմատեսակ հերթական խնդիրների իրագործումը:

Արևելքի ժողովուրդների Համալսարանում կան զաղութային և կախյալ յերկրներից յեկած ունկնդիրների մոտ 10 տարրեր խմբակ: Բոլորին հայտնի յե, վոր այդ ընկերները ծարավի յեն լույսի ու գիտության, Արևելքի ժողովուրդների Համալսարանի անելիքն այն պիտի լինի, վոր նրանցից իսկական հեղափոխականներ կոփի, այնպիսի հեղափոխականներ, վորոնք զինված լինեն լենինիզմի թեորիայով, ունենան լենինիզմի գործնականականություն և ընդունակ լինեն խզմի մտոք իրագործելու զաղութների և կախյալ յերկրների ազատազրական շարժման հերթական խնդիրները:

Ընդունին անհրաժեշտ է ի նկատի ունենալ այն հանգամանքը, վոր զաղութային Արևելքի ակտիվ աշխատավորների գործնականում յերկու շեղում կա, վորոնք դեմ պայքարելին անհրաժեշտ և իսկական հեղափոխական կազմեր զաստիարակելու համար:

Աստվին շեղումն ազատազրական շարժման հեղափոխական համարակությունների թերագնահատումն է և զաղութներում ու կախյալ յերկրներում միացյալ համայնապարփակ ազգային ճակատի իդեալի գերգնահատումը, անկախ այդ յերկրների վիճակից ու զարգացման աստիճանից: Այս շեղում է գեպի աջ վորը հզի յե հեղափոխական շարժման նվաստացման և կոմոնիստական տարրերի՝ բուրժուական նացիոնալիստների ընդհանուր հոսանքի մեջ լուծվելու վտանգով: Այդ շեղումի դեմ վճռական պայքար մղելն Արևելքի ժողովուրդների Համալսարանի ուղղակի պարտականությունն է:

Յերկրորդ շեղումն ազատազրական շարժման հեղափոխական համարակությունների գերգնահատելն է, և իմպերիալիզմի դեմ ուղղված բանվոր դասակարգի և հեղափոխական բուրժուակայի դաշինքի գործի թերագնահատելը: Այս շեղումով տառապում են, կարծեմ, ձավայի կոմոնիստները, վորոնք վերջերս իրենց յերկրի համար սխալմամբ առաջարել եյին խորհրդային իշխանության լողունգը: Այս շեղում է գեպի ձախ, վորը հզի յե մասսաներից կտրվելու և կոմկուսակցությունները սեկտաներ գարձնելու վտանգով: Այս շեղումի դեմ վճռական պայքար մղե-

լը — Արեգելքի գաղութների և կախյալ յերկրների համար իսկական հեղափոխական կազմեր դաստիարակելու անհրաժեշտ պայմանն եւ:

Ըստհանուր առմամբ սրանք են Արեգելքի ժողովուրդներ Համալսարանի քաղաքական խնդիրները խորհրդային և գաղութային Արեգելքի ժողովուրդների նկատմամբ:

Հուսանք, վոր Արեգելքի ժողովուրդների Համալսարանը կը կարողանա պատվով իրագործել այս խնդիրները:



«Ազգային գրադարան»



NL0185622

ԳԻՒՆ Ե 15 ԿՈՐ.